Հայ-թուրքական հարաբերությունները մեր օրերում

Հեղինակ՝
Լաուրա Թորոսյան

Ո՞ր փուլում է հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների կարգավորման գործընթացը և ինչպես փոխվեց իրավիճակը Թուրքիայիում Փետրվարի 6-ին տեղի ունեցած երկրաշարժից հետո:

Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորման խնդիրը հատկապես 2020 թ.-ին, երբ կատարվեցին փորձեր հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ ավելի շահագրգռված էր հարաբերությունները կարգավորել Թուքիան, որի ՀՀ հետ հարաբերությունները կարգավորելու նպատակը բխում էր Եվրոմիության կազմի մեջ մտնելու և դեմոկրատ երկիր երևալու խնդիրը: Վերացել էր մինչև 2020թ.-ի Թուրքիայի կողմից դրված նախապայմանն ըստ որի՝ Հայաստանը պետք է ետ վերադարձներ օկուպացված շրջանները, քանի որ դրանք արդեն Ադրբեջանի հսկողության տակ էին: Հարաբերությունների կարգավորման համար գրավական էր նաև այն, որ վատթարացել էր Թուրքիայի տնտեսությունը համաճարակից հետո: Սակայն այս փուլում Հայաստանը պատրաստ չէր Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու, և չէր պատասխանում Թուրքիայից եկող ազդակներին: Հիմա երբ Հայաստանն է շահագրգռված Թուրքիայի հետ վերաբացել հարաբերությունների կարգավորման հարցը սկսվեց ռուս-ուկրաինական պատերազմը, որտեղ Թուրքիան այժմ միջնորդի դեր է կատարում Ուկրաինայի և Ռուսաստանի միջև: Այսինքն ստացվեց այպես, որ Թուրքիայի թիրախը դարձավ ռուս-ուկրաինական պատերազմը, իսկ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումն անցավ ետին պլան:

Ըստ իս Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը Հայաստանը տեսնում է որպես նոր եկող պատերազմի կանխիչ գործոն: Բոլորս էլ տեսանք, թե ինչ մեծ օգնություն ցուցաբերեց Թուրքիան Ադրբեջանին 2020թ.-ի պատերազմում: Այսինքն Հայաստանի այն դիվանագիտությունը, որը տրամադրված էր Թուրքիայի հետ բանակցություններ չվարելու հիմա վերակազմավորվում է Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ:
Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների կարգավորման փուլում պրոցեսը հնարավոր է դանդարեցնի մի իրադարձություն, որի մասին քիչ է խոսվում Հայաստանում՝ Թուրքիայում կայանալիք ընտրությունները: Հիմա Թուրքիան փորձում է լուրջ որոշումներ դեռևս չիրականացնել: Ընտրություններից հետո ամեն բան ավելի պարզ կդառնա հաշվի առնելով նաև, թե ի՞նչ արդյունք կտան ընտրությունները: Այնուամենայնիվ կարծում եմ Հայաստանը պատրաստ է շարունակել բանակցություններն այս հարցի շուրջ:

Հարաբերությունների կարգավորման դրական կողմ է նաև այն հանգամանքը, որ այս անգամ չկա երրորդ կողմ, որ հրահրում է անցկացնել բանակցություններ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ:

Թուրքիայում Փետրվարի 6-ին տեղի ունեցած երկրաշարժից հետո Հայաստանի կողմից ուղարկված օգնությունը շատ գեղեցիկ ձևով լուսաբանվեց հեռուստատեսությամբ և սոցմեդիայում, լավ արձագանքներ ստացանք նաև թուրք պաշտոնյաների կողմից ինչպիսիք են օրինակ՝ Մևլութ Չավուշօղլուն և Սերդար Քըլըչը: Կարծում եմ նաև մի որոշ չափով Թուրքիայի հասարակության Հայաստանի մասին կարծիքը փոխվեց քանի որ այնտեղ էլ կան ազգայնակն շատ ձայներ, որոնք դեմ են Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման իրականացմանը: Այսպիսով

Հայաստանի կողմից իրականացված այս քայլը պատնեշ հանդիսացավ այդ ազգայնական ձայներին:

Այսօր Հայաստանի և Թուրքիայի միջև ցամաքային սահմանը բացելու մտադրությունները միայն երրորդ երկրի քաղաքացիների համար են, սակայն ի՞նչպիսի հեռանկարներ կան սահմանի լիարժեք բացման ուղղությամբ:

Այսօր Հայաստանի և Թուրքիայի միջև ցամաքային սահմանը բացելու մտադրությունները միայն երրորդ երկրի քաղաքացիների համար են, քանի որ այս սահմանը երկար ժամանակ փակ է եղել կարծում եմ միանգամայն սահմանների լրիվ բացումը կարող է վտանգավոր լինել ՀՀ քաղաքացիների համար: Վտանգ կարող են հանդիսանալ՝ Մարգարայի կողմից Իգդիրի ադրբեջանախոս ժողովուրդը, որոնք վատ են տրամադրված և իրենց ատելության խոսքն են արտահայտում հայերի նկատմամաբ: Այսինքն փուլ առ փուլ սահմանների բացումը երկու երկրների համար էլ ավելի արդյունավետ կլինի: Ինչպես նաև, եթե սահմանը բացվի երրորդ երկրների քաղաքացիների համար, ապա կան հեռանկնարներ նաև այն ուղղությամբ, որ սահմանը կբացվի երկու երկրների քաղաքացիների համար: Թուրքիայում կայանալիք ընտրություններից հետո կարծում եմ կանցկացվեն բանակցություններ երկու երկրների միջև երրորդ երկրների քաղաքացիների և հայ դիվանագետների համար սահմանների բացման ուղղությամբ: Սակայն այս ամենը դիրքորոշումներ են որոնք դեռ քննարկման փուլում են, որոնց ընդունումը անմիջական կապ ունի ընտրությունների արդյունքների և առհասարակ տարածաշրջանում զարգացող փոփոխությունների հետ:

Եզրակացություն

Թուրքիական մեծ պետություն է, զարգացած տնսեսությամբ: Կարևոր է միտ հիշել այն, որ Թուրքիան իր արտաքին քաղքականությունը կառուցում է միայն իր սեփական շահերի հիման վրա, և այս ամենը հաշվի առնելով Հայաստանը պետք է կառուցի հատուկ սխեմա Թուրքիայի հետ բանակցություններ վարելու համար: Կարծում եմ անքննարկելի է այն փաստը, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության անմիջական մաս է կազմում Ադրբեջանը: Սակայն Թուրքիայի արտաքին քաղքականությունը չի՛ սահմանափակվում Ադրբեջանի հետ բարիդրացիական կամ ինչպես ընդունված է ասել <<եղբայրական>> հարաբերություններով: Թուրքիան ունի Եվրոմիության կազմի մեջ ինտեգրման խնդիր, ինչը նշանակում է, որ Թուրքիային ձեռնտու չի Կովկասում լարված իրավիճակը, պատերազմը: Այստեղ Հայաստանի և Թուրքիայի շահերը համընկնում են: Չնայած նրանց, որ շահերի համընկնումները քիչ են՝ դրանք կան, և դրանք հարցեր են որոնց վրա պե՛տք է աշխատել:

Աղբյուրներ՝

Երկկողմ հարաբերություններ
«Ջերմացումը դեռևս ժամանակավոր է». կարծիք հայ-թուրքական հարաբերությունների մասին
Հայաստանը 100 տոննա մարդասիրական օգնություն է ուղարկել Թուրքիա
Ինչու՞ Թուրքիային ավելի շատ օգնություն տրվեց, քան՝ Սիրիային. Արմեն Փամբուխչյանի պարզաբանումը
Մարգարայի կամրջի վիճակը ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը դեռ չի ստուգել
Մարգարայի կամրջի բացումն ու փակումը
Մարգարայի կամուրջը պատրաստում են հայ–թուրքական սահմանի բացմա՞նը
Արարատ Միրզոյանը վաղը կմեկնի Թուրքիա
Արարատ Միրզոյանի այցը Թուրքիա պատմական է. Տոյվո Կյասը
Բոյուսելը պատմական է անվանում Արարատ Միրզոյանի այցը Թուրքիա
Թեմայի վերաբերյալ հասարակության կարծիքները Թվիթերյան հարթակներում
Վարչապետը գրում է երկրաշարժի մասին
ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ ԹՈՒՐՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔԸ՝ ԹՎԻԹԵՐՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ **ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՑՈՒՑԱԲԵՐՎՈՂ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**
Հայ և թուրք հասարակության կարծիքը՝ հայ-թուրքական հարաբերությունների մասին